ԾԻՍԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

ԹԱՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ծիսական տոնահանդեսները, մրցակցային արարողություններն ու սովորույթներն օգնել են հնագույն հանրույթին կազմակերպվելու տոհմի կենսական պահանջների և կրոնադիցաբանական պատկերացումների համաձայն: Այս մասին հարուստ վկայություններ են պահպանվել նաև հայ ժողովրդի բանահյուսական կենցաղում ու հրաշապատում հեքիաթներում, որոնց հնությունը կապվում է շատ հեռավոր ժամանակների հետ: Ինչպես հեքիաթների միջազգային ժառանգության մեջ, այնպես էլ Աարնե-Թոմփսոնի «Ժողովրդական հեքիաթների տիպերի» համացույցի AT 530 A թվահամարին համապատասխանող հայկական հրաշապատում հեքիաթներում կան դիպաշարային տարբեր փոփոխակներ՝ օտար երկիր գնացած նվիրագործյալ հերոսի մասին, ով, ծիսական մրցախաղերում հաղթող դուրս գալով, նվաճում է արքայադստեր սիրտը՝ ներառյալ վերջինիս հոր թագավորությունը կամ գոնե դրա կեսը[1]:

Հրաշապատում հեքիաթներում հրաշածին տղաներից մեկի չափահաս դառնալուն պես դերվիշը նրան հեռացնում է տնից և տանում անդրաշխարհ («անվերի սարի գլուխ»)՝ փորձություններով ուղեկցվող նվիրագործման ծեսերի ենթարկելու: «Նվիրագործության արարողությունը,– մշակույթի տեսաբան Յոհան Հայզինգայի կարծիքով,– բոլոր ժամանակներում իր մի շարք կողմերով ներառված է մնում խաղ կատեգորիայում, սակայն նրա սրբազան բնույթի ճանաչումն այս ենթակայությամբ չի անհետանում»[2]: Դերվիշի տված «կանաչ չբրուղի» և հրեղեն ձիերի մազերի շնորհիվ տղան ձեռք է բերում կախարդական օգնականներ, նվիրագործվում ջրի ծիսական տիրույթում և ոսկե գանգուրներով ու ճկույթով վերադառնում է այսրաշխարհ (նախամուսնական փորձությունների հաղթահարում): Բնակավայրից հեռու՝ օտար միջավայրում, մորթված ոչխարի, գառան կամ ուլի փորով (ղառի, թափան) ոսկե գանգուրները թաքցնելով՝

---

[1] *Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետ՝ ՀԺՀ), հ. IV, Երևան, 1963, էջ 302–309, «Քյալ օղլան» (Բասեն), հ. VI, Երևան, 1973, էջ 116–128, «Դավրիշին տղան» (Արցախ), հ. VII, Երևան, 1979, էջ 88–92, «Ղազրեր պահող տղան» (Արցախ), հ. VIII, Երևան, 1977, էջ 375–386, «Շահվելադն ու Բանգլիբարը» (Գուգարք-Լոռի), հ. X, Երևան, 1967, էջ 107–116, «Քաչլիկի հեքիաթը» (Տուրուբերան-Մուշ-Բուլանըխ), հ. XII, Երևան, 1984, էջ 23–28, «Քեչլիկ» (Մուշ), հ. XIII, Երևան, 1985, էջ 40–49, «Քաջանց թագավորի տղու՝ Ուսուֆ Չելեպու հեքիաթ» (Մուշ), հ. XIII, էջ 74–90, «Ահմատ ու Մահմատ» (Մուշ), Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետ՝ ՀԱԲ), հ. 14, Երևան, 1983, - 6 (14), էջ 86–92, «Անժառանգ թագավորը» (Գեղարքունիք), Հ. Հ ա ճ ի ա ն. Հին ավանդական հեքիաթներ Խոտորջրոյ (այսուհետ՝ ՀՀ ՀԱՀԽ), Վիեննա, 1907, -ԺԹ, էջ 70–81, «Տոմղաչիին հեքիաթը» (Խոտորջուր):*

[2] *Յո. Հ ա յ զ ի ն գ ա.* Homo Ludens, *Մշակույթի խաղային տարրի սահմանման փորձ, Երևան, 2007, էջ 45:*

Քյալ (Քաչալ, Քաջլուկ) հերոսը ծառայության է անցնում այգեպանի մոտ և երեք ձմերուկ[3] (տարբերակ՝ խնձոր[4]) է տանում թագավորին, որոնց հասունության աստիճանը պալատականների մեկնաբանությամբ նշանակում է, որ կրտսեր արքայադստեր ամուսնության ժամանակը եկել է, իսկ ավագի ու միջնեկի համար անցել է: Հենց այս ժամանակ է, որ թագավորն իր աղջիկների ձեռքին տիրանալու իրավունքը վիճարկում է մրցությամբ՝առաջնակարգ տեղ տալով հավակնորդների արտաքին վայելչությանն ու ֆիզիկական տվյալներին. «Մարդկային խաղն իր բոլոր բարձրագույն դրսևորումներում, որոնցում ինչ-որ բան է նշանակում *կամ ինչ-որ բան* հատկանշում*, իր տեղն ունի տոնախմբության և պաշտամունքային ոլորտում»[5]:*

«Քաչլիկի հեքիաթում»[6] (Բասեն) աղջիկը պահանջում է, որ բոլոր փեսացուներն իր «փանջարի տակից անցնին, հ՚որին որ ես օսկե խնձորով տվի, էնոր կ՚առնիմ»[7]: «Նախրորդ Գալոյի տղեն»[8] (Տուրուբերան-Մուշ) հեքիաթում թագավորի աղջիկը նստում է «իրեք խաթեն փանջարեմ՝ ինչ մարդ օր էկավ ձիով, խաղցուց զուր ձին ու թռավ, իմ մատնիկ իմ մատնեն տարավ, ես էն մարդ կառնիմ»[9]: Ոչ ոք չի կարողանում կատարել առաջադրանքը. «Քաչալ գնաց մեկ մեյդան էկավ, մեկ էլ մեյդընեն, օր էկավ, թռավ առավ աղջկա մատնիկ ու գնաց:

Բոռացին.– Ըդ ձիավոր բռնեԲք, հաԲ բռնեք»[10]:

Թագավորը հրամայում է զորապետին երկրի ողջ ժողովրդին հավաքել պալատի դիմացի հրապարակում, որպեսզի աղջիկներն իրենց արժանի փեսացուներ ջոկեն: Ընտրությունը կատարվում է խնձորի[11] խորհրդանշական իմաստաբանությամբ. թագավորի մեծ աղջիկը ձեռքի խնձորով խփում է զորապետի տղայի մեջքին, միջնեկը՝ իշխանի տղայի մեջքին, իսկ կրտսերը, որ թաքուն տեսել էր Քաչալի ոսկի գանգուրները, խնձորը ձեռքին երկար սպասում է, մինչև որ հայտնվի իր ընտրյալը: Թագավորը աղջկա ընտրությունը համարում է շփոթության արդյունք: Սակայն կրտսեր արքայադուստրը, աներեր մնալով իր որոշման մեջ, կրկին ձեռքի խնձորով խփում է Քաչալի գլխին: Նրա «անխոհեմ» ընտրությամբ Քաչալը դառնում է թագավորի փեսա՝ շարունակելով մերժված մնալ և՛ թագավորի, և՛ վերջինիս աղջիկների ու նրանց ամուսինների կողմից:

Թագավորի հրամանով հարսանիքի պատրաստություն են տեսնում մեծ և միջնեկ աղջիկների համար, իսկ փոքրին Քյալ օղլանի հետ նետում են սագանոցը: Փաստական նյութի տրամաբանությամբ՝ թագավորի Քաչալ

---

[3] *ՀԺՀ, հ. IV, էջ 302–309, հ. XII, էջ 524–539, հ. XIII, էջ 40–49:*

[4] *ՀՀ ՀԱՀԽ, էջ 80–81:*

[5] *Յո. Հ ա յ գ ի ն գ ա. նշվ. աշխ., էջ 18:*

[6] *ՀԺՀ, հ. IV, էջ 244–256:*

[7] *Նույն տեղում, էջ 254:*

[8] *ՀԺՀ, հ. XII, էջ 29–33:*

[9] *Նույն տեղում, էջ 31:*

[10] *Նույն տեղում, էջ 32:*

[11] *«Սասունցի Դավիթ» հերոսավեպում նույնպես Խանդութ խանումը Դավթին ընտրում է խնձորի միջոցով (Սասունցի Դավիթ, Հայ ժողովրդական հերոսավեպ, Երևան, 1981, էջ 262):*

փեսան ծաղրուծանակի է ենթարկվում, նրան ու իր քոսոտ ձիուն քարկոծում են քաղաքի տղաները, քանի որ թագավորը, ի հակակշիռ «արժանավոր» փեսաներին տրամադրած նժույգների, աղջկա թախանձանքով Քյալ օղլանին տվել էր քոսոտ կամ կաղ մի ձի: Սակայն Քյալ օղլանը, իր խելքով, շնորհքով և հնարամտությամբ ձեռք բերելով ու կրակ տալով Ղրռ (ճերմակ՝ սև բծերով) և Տոռի (կարմիր) ձիերի մազերը, հրեղեն ձիերին հեծած, հայտնվում է «մեյդանում», խայտառակ պարտության մատնում թագավորի ամբարտավան փեսաներին և ակնթարթորեն հեռանում հրապարակից.

«Ջոջ քուրը կըսե.– Իմ նշանածն է:

Օրթանջի քուրը կըսե.– Չէ՛ իմն է:

Պզտիկ քուրը ձեն չի հանե: Բայց գիտե իրեն նշանածն է»[12]:

Յոթ օր, յոթ գիշեր տևող հարսանիքն ուղեկցվում է մականախաղով (ջլիթ), (տարբերակներում՝ ջիրինդ, ջդիր, ջրինտ) հեծելավարության դժվարին հնարքների ցուցադրությամբ, ինչն էլ վկայում է հրապարակային մրցախաղերի նկատմամբ հայոց մեջ ձևավորված հնագույն մշակույթի մասին. հետաքրքիր է նկատել, որ մական *բառը ցույց, գավազան, մահակ իմաստներից բացի նշանակում է նաև իշխանություն[13]:*

«Անմահական խնձոր»[14] (Այրարատ) հեքիաթում ձիարշավի ժամանակ հեծյալ կտրիճն իր ուժով, տոկունությամբ, ձիավարության ճարպիկ ոստյուններով այնպես է տարբերվում մրցակիցներից, որ «խաբարը տարան թագավորին, թե ըսենց մի Կարմիր ձիավոր ա էկե, ջդրավորների մեջը խառնըվե. հենց ո՛ւմ ետևիցը որ ընկնում ա, ջդրով տալի՝ ալբիալը ձիուցը կունտկի ա անում՝ յա՛ լլա գետինը: Թագավորը դուս ա գալի. ասում ա՝ տենամ էդ ի՛նչ ձիավոր ա, որ էդքամ դոչաղություններ ա անում»[15]:

«Քյալ օղլան»[16] հեքիաթում «Իրեք քուրն ի իրարի քով, փանջարի առաջը նստել են ու սեյր կէնեն ջլիթ խաղցողներուն: Գուքա էդ Տոռի ձիավորը սադրազանի տղին մե ջլիթըմ կը զարկե, վեր կը թողնե ու ձին կը քշե: Ձիավորները ետևը գըյնին, չեն հասնե»[17]: Արդեն հետամուսնական փորձությունների հաղթահարման փուլում, երբ հիվանդ թագավորին փրկելու համար անհրաժեշտ էր գտնել-բերել առյուծի ձագի տկով առյուծի կաթ (անմահական ջուր, խնձոր, սև կխտարի գլուխ և ոտքեր, եղնիկի միս, արծվի միս ու կաթ) կամ էլ թշնամուն պետք էր շպրտել երկրի սահմաններից դուրս, թագավորի ավագ փեսաները վրանի մեջ տրվում են կերուխումի: Քյալ օղլանը ձեռք է բերում այն ամենը, ինչ անհրաժեշտ էր թագավորին, սակայն առյուծի կաթի տեղը այծի կաթ է տալիս բաջանաղներին և

---

[12] *ՀԺՀ, հ. IV, էջ 306:*

[13] *Է դ. Ա ղ ա յ ա ն. Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1976, էջ 955:*

[14] *ՀԺՀ, հ. II, Երևան, 1959, էջ 23–39:*

[15] *Նույն տեղում, էջ 37:*

[16] *ՀԺՀ, հ. IV, էջ 302–309:*

[17] *Նույն տեղում, էջ 306: «Արդի գիտությունը խաղը և սպորտը համարում է մարդու աշխատանքային և սոցիալական գործունեության առանձնահատուկ վերարտադրությունը, կյանքի երևույթների արտացոլումը» (Հայ ժողովրդական խաղեր, հ. I, աշխատասիրությամբ՝ Վ. Բդոյանի, Երևան, 1963, էջ 5):*

փոխարենը նրանց հետույքներին[18] (ճակատին[19], մեջքին[20], սրտին[21]) «դաղմով» (կնիք) դաջվածք է անում.

«Քյալ օղլանը կըսե կը.– Դուք ի՞նչ մարդիկ եք:

Կ՚ըսեն կը.– Մենք էկեր ենք թագավորին ասլընի կաթ տանելու:

Քյալ օղլանի քովն էլ կէղնի մե տիկըմ իծու կաթ:

Կ՚ըսե կը.– Էկե՛ք ես ձեզի ասլընի կաթ տամ:

Կ՚ըսեն.– Լավ, տուր, ապա ի՞նչ տանք օր տաս:

Քյալ օղլանը կըսե.– Ես ձեզնեն բան չեմ առնի: Էկեք ես ձեր օռին էս դաղմով մե մեկ դաղմա զարկեմ, կաթը տամ»[22]:

Երբ Քյալ օղլանը երախտագետ կենդանիների օգնությամբ հաղթում է երկիր ներխուժած թշնամիներին, նրա վիրավոր ձեռքը կապում են թագավորի թաշկինակով: Թագավորն իր վախկոտ փեսաների մարմիններին դրոշմված կնիքների և սեփական թաշկինակի միջոցով բացահայտում է ճշմարտությունը և թագը հանձնում ոսկեգանգուր Քաչլիկին: AT 301 տիպի հայկական հեքիաթներում, երբ տղան մութ աշխարհում սպանում է ջրարգել վիշապին, փրկում թագավորի աղջկան, վերջինս արյունոտ ձեռքով դրոշմ է դնում տղայի մեջքին[23] (տարբերակ՝ սրտին[24]): Նվիրագործում անցնող հերոսն իր վրա նշան է կրում (դրոշմ, կնիք, դաջվածք)[25], մեծ մասամբ նրա մազերն ու մատները ոսկեզօծվում են[26] և այսրաշխարհում նա ստիպված «վիրակապում» է մատը կամ ծպտվում է Քաչալի կերպարանքով: Մարդը վերածնվում է նոր, ավելի բարձր կարգավիճակում՝ անգիտակցականի հնագույն արքետիպերի թելադրանքով այս փոփոխությունը կրելով ոչ միայն արտաքին-ֆիզիկական, այլև հոգեկան մակարդակում: «Պաշտամունքի մասնակիցները հավատացած են, որ արարողությունն իրագործում է բարօրություն և իրականացնում է իրերի ավելի բարձր կարգ, քան որոնցում իրենք սովորաբար ապրում են»[27]: Հասակային դասերի հետ են կապված երիտասարդների մարմինների վրա անջնջելի խարաններ դրոշմելը, որը վկայում է տարիքային մի խմբից մյուսին անցած լինելու մասին[28]: Հայկական հեքիաթների նվիրագործյալն անդրաշխարհից

---

[18] *AT 530 A տիպի հեքիաթների գերակշիռ մասում Քաչալը պայտով խարան է թողնում թագավորի փեսայի հետույքին:*

[19] *ՀԺՀ, հ. XIII, էջ 40–49, «Քաջանց թագավորի տղու՝ Ուսուֆ Չելեպու հեքիաթ» (Մուշ), հ. XIII, էջ 74–90, «Սիմատ ու Մահմատ» (Մուշ):*

[20] *ՀԺՀ, հ. V, Երևան, 1966, էջ 15–27, «Վրեսկե խնձոՐը» (Արցախ-Շուշի), հ. VII, էջ 11–15, «ԼոՐուս նան մթեն աշխարքնեն» (Արցախ), հ. IX, Երևան, 1968, էջ 13–34, «Սինամհավք» (Ալաշկերտ), հ. XIII, էջ 9–13, «Լուս ու մութ աշխարք» (Տուրուբերան-Մուշ), ՀԱԲ, հ. 19 (Թալին), Երևան, 1999, էջ 70–71, «Բզդիգ ախպեր» (Մուշ, Ալվառինջ):*

[21] *ՀԺՀ, հ. VI, էջ 656–659 (հավելված), «Թագավորին իրեք որդոցը վեպը» (Արցախ):*

[22] *ՀԺՀ, հ. IV, էջ 308:*

[23] *ՀԺՀ, հ. V, էջ 15–27, հ. VII, էջ 11–15, հ. IX, էջ 13–34, հ. XIII, էջ 9–13, ՀԱԲ, հ. 19, էջ 70–71:*

[24] *ՀԺՀ, հ. VI, էջ 656–659:*

[25] М. Э л и а д е. Тайные общества. Обряды инициации и посвящения. Киев, 2002, с. 21, 56.

[26] *ՀԺՀ, հ. VII, էջ 88–92, հ. X, էջ 107–116, հ. XIII, էջ 74–90, հ. XIV, Երևան, 1999, էջ 314–320:*

[27] *Յո. Հ ա յ զ ի ն գ ա. նշվ. աշխ., էջ 26:*

[28] *Ա. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Հայկական զարդարվեստ, Երևան, 1955, էջ 363:*

վերադառնում է ոսկեզօծ մազերով[29] ու մատներով[30] (ճկույթ), այսինքն՝ փորձությունների դիմակայման մասին վկայող հաղթանշաններով: Հեքիաթներում հաճախ այդ նշաններն առարկայանում են դրոշմների և դաջվածքների տեսքով՝ խորհրդանշելով հնագույն պատմահասարակական հարաբերություններին բնորոշ (տեղեկատվական, կրոնածիսական, էթնոմշակութային) պատկերացումներ[31]: Վ. Պրոպի կարծիքով՝ այս ամենի մեջ ազգագրական փաստերով հաստատվող ճշմարտության մեծ բաժին կա[32]: «Հնում ընդունված է եղել տոտեմ կենդանու նմանողությամբ խարաններ դնել տոհմի անդամների մարմնի վրա: Այս սովորությունը հետագայում որպես մնացուկ անցել է նաև քրիստոնեությանը: Աղվեսադրոշմն էլ այդպիսի ծագում է ունեցել»[33],– գրում է Ա. Մնացականյանը:

Հայ ժողովրդական հեքիաթներում նվիրագործվող հերոսների մարմնի տարբեր մասերին դաջված դրոշմանշանները ծիսական բնույթ ունեն, «որոնք աստիճանաբար վերածվել են հասարակության սոցիալական շերտերը ներկայացնող մարդկանց անձը, սեփականությունն ու իրավունքը հաստատող խորհրդանիշերի՝ կնիքների»[34]: Հայկական մի խումբ հեքիաթներում[35] էլ, իբրև խորհրդածեսի հաղթահարման ապացույց, նվիրագործվող հերոսը հենց ինքն է դաբաղում թագավորի փեսաների հետույքներին և պայտով խարան (դրոշմանշան) թողնելով՝ ապահովում է հետագայում ճշմարտությունը բացահայտելու և թագավորական ժառանգությանը տիրանալու հնարավորությունը:

Այսպիսով՝ Հայաստանի պատմաազգագրական տարբեր շրջաններից գրառված մեզ հետաքրքրող հեքիաթների փոփոխակներում արքայադստեր ձեռքին տիրանալու իրավունքը վիճարկվում էր մրցությամբ, որի բարձրագույն պարգևը թագավորական գահն էր: Հաղթում էր սեփական մարմնին հաղթանշաններ կրող կամ հակառակորդի մարմինը խարանած հերոսը: Ազգագրական նյութի վկայաբերումով՝ խաղադրույք կարող է լինել ոսկե գավաթը, թանկարժեք իրը, արքայադուստրը, «քանի որ հին հասարակությունն աշխարհի բարօրության երաշխիք ծառայող իր սրբազան արարողությունները՝ նվիրագործությունները, զոհաբերությունները,

---

[29] *ՀԺՀ, հ. VII, էջ 88–92, հ. XII, էջ 23–28:*

[30] *ՀԺՀ, հ. XIII, էջ 74–90:*

[31] *Այսօր երիտասարդական ենթամշակույթում մեծ տեղ է զբաղեցնում դաջվածքը, որը, շրջանցելով վերոհիշյալ գաղտնածիսային պատկերացումները, կենցաղավարում է հատկապես գեղագիտական գործառույթի շնորհիվ (*Ю. В. Рычкова. Искусство или дань моде, http://tattooconvention.ru/articles/fashion.html. 22.11.2007*):*

[32] В. Я. Пропп. Фольклор и действительность. М., 1976, с. 275.

[33] *Ա. Մնացականյան. նշվ. աշխ., էջ 269: Թոնդրակեցիների ճակատին աղվեսադրոշմ խարանելու մասին տե՛ս Գր. Մագիստրոսի թղթերը, ի լույս ընծայեց Կ. Կոստանյան, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 162: Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետ՝ ՄՄ) ձեռագրերում վկայություն կա ուրացողների մարմնի վրա երկու տեղ խփվող կնիքի մասին. «Ուրանամ զարարիչն երկնի և երկրի, ուրանամ զհավատս իմ և զքեզ դաւանիմ...» (ՄՄ, ձեռ. - 4724, թերթ 239բ):*

[34] *Ա. Մնացականյան. նշվ. աշխ., էջ 264:*

[35] *ՀԺՀ, հ. IV, էջ 302–309, հ. VI, էջ 116–128, հ. VII, էջ 88–92, հ. XII, էջ 23–28, հ. XIII, էջ 40–49, հ. XIII, էջ 74–90, ՀՀ ՀԱՀԽ, էջ 80–81 և այլն: Սարնե-Թոմփսոնի նշացանկի հեքիաթներում այդպիսի նշաններ են կտրված մատներն ու կոնակի պոկված մաշկը (AT 530 A):*

միստերիաները, կատարում է զուտ խաղով՝ բառի ամենաուղղակի իմաստով»[36]: Թագավոր էր դառնում իր բնակատեղից օտարված և կնոջ երկրում հաստատված տղամարդը, որովհետև «աղջկա, հատկապես արքայադստեր հետ ամուսնանալու իրավունքը տրվում էր որպես մարզական մրցույթում շահած պարգև»[37]: Իսկ տիրանալ արքայադստեր ձեռքին, նշանակում է տիրանալ նաև վերջինիս հոր գահին: Հատկանշական է, որ մրցաքննության հիմքով ստեղծված հեքիաթներում արքայադուստրը սովորաբար եղբայր չի ունենում: Այդ պատճառով էլ բանահյուսության մեջ որդու դերը անտեսվում է, քանի որ պատմականորեն նա գահի ժառանգորդ չի համարվում: Թագավորի՝ որդիներ ունենալու հանգամանքից անկախ՝ նրանք նույնպես պետք է ինքնահաստատվեին փորձություններ հաղթահարելու և իրենց ապագա կանանց երկրներում բնակություն հաստատելու ճանապարհով:

Թագավորական իշխանության ժառանգորդման այս ձևը համապատասխանում է մշակույթի արխաիկ ժամանակաշրջաններում հասարակության զարգացման այն աստիճանին, երբ գահի հավակնորդի կամ թագավորի փոխանորդի սոցիալական ծագումը չի կարևորվում, նրանից պահանջվում է միայն համապատասխան զուգընկերակցություն, ֆիզիկական և մտավոր ընդունակություններ, առողջ, ուժեղ, գործունյա սերունդ վերարտադրելու կարողություն[38]: Հայկական հեքիաթներում անգավակ թագավորի վիշտը թևածում է երկրով մեկ. ոչ միայն թագավորն է անպտուղ, այլև նրա այգին և արքայական նժույգը[39], իսկ վերարտադրության ընդունակությունը կորցրած արքան աղետ է մարդկության ու բուսակենդանական աշխարհի արգասավորության համար:

Քննարկելով գահաժառանգման շուրջ Ջ. Ֆրեզերի դիտարկումները՝ հայտնի բանագետ Վ. Պրոպը կարծում է, որ նրա կողմից անուշադրության է մատնվել մի կարևոր հանգամանք. գահակալումը վրա է հասնում ոչ թե որոշակիորեն սահմանված ժամանակամիջոցում՝ 5, 10, 12 տարի (նշվում են նաև այլ ժամկետներ)[40], այլ ճիշտ այն ժամանակ, երբ արքայադուստրը հասնում է ամուսնական տարիքի. դստեր ամուսնությամբ թագավորը զրկվում է ոչ միայն գահից, այլև կյանքից[41]:

Ըստ Պրոպի՝ «բանահյուսական նյութը իրավունք է տալիս հաստատելու, որ գահաժառանգորդը «դժվարին առաջադրանքների» կատարումով պետք է ապացուցեր, որ ինքը մոգական ուժի կրող է»[42] և, ըստ էության, դրա դրսևորումներից մեկն էլ ծիսական մրցաքննությունն է. «Պաշտամունքային խաղի ձևերում է առաջ եկել հենց հասարակության կարգը, պարզունակ պետական ձևի կառուցվածքը: Թագավորն արևն է, թագավորությունը՝

---

[36] *Յ ո. Հ ա յ զ ի ն զ ա. նշվ. աշխ., էջ 12:*

[37] *Ջ. Ֆ ր ե զ ե ր. Ոսկե ճյուղը. մոգության և կրոնի ուսումնասիրություն, Երևան, 1989, էջ 191:*

[38] *Նույն տեղում, էջ 191:*

[39] *ՀԺՀ, h. IV, էջ 302–309, h. VI, էջ 116–128, h. VIII, էջ 375–386, h. XIII, էջ 74–90, ՀԱԲ, h. 14, էջ 86–92:*

[40] В. Я. П р о п п. Исторические корни волшебной сказки. Л., 1946, с. 310.

[41] В. Я. П р о п п. Фольклор и действительность, с. 265.

[42] В. Я. П р о п п. Исторические корни волшебной сказки, с. 311.

արևի շրջապտույտի պատկերավորումը: Իր ողջ կյանքում թագավորն «արև» է խաղում և ի վերջո արժանանում արեգակի ճակատագրին. իր սեփական ժողովուրդը ծիսական ձևով վերջ է տալիս նրա կյանքին»[43], իսկ հրաշապատում հեքիաթներում ծիսական արքայասպանությունն իրականացնում է գահի հավակնորդը, ում համար խաղադրույք կարող է լինել ոսկե գավաթը (խնձորը), որը խորհրդանշում է արքայադստերը: Արքան իր կենդանության օրոք, լավագույն դեպքում, թագավորությունը կարող է կիսել փեսայի հետ, սակայն, ամբողջ թագավորությանը տիրանալու համար փեսան պիտի սպաներ արքային[44]: Վերոհիշյալ հնամենի ծեսերը բանահյուսական և ազգագրական նյութերով այնքան հիմնավոր են փաստարկված, որ աներկբայորեն կարող են շրջանառվել որպես մշակութապատմական կայուն տվյալներ:

Մեզ հետաքրքրող դիպաշարի տասը փոփոխակներում գահաժառանգման հարցը լուծվում է մրցաքննությամբ: Ինը տարբերակներում թագավորն իր կենդանության օրոք գահը փոխանցում է փեսային, մեկ հեքիաթում գահի հավակնորդը ստանում է թագավորության կեսը[45], սակայն հայկական հրաշապատում հեքիաթների մեծ մասում թագավորությանը տիրելու համար փեսան ստիպված է լինում սպանել թագավորին, «քանի որ ժողովրդի գոյությունն ու բարգավաճումը կախված է քուրմ թագավորի ֆիզիկական հատկանիշներից և կենսական էներգիայից, որի անկումը կործանարար կարող է լինել ողջ թագավորության համար»[46]:

Բանահյուսական, ազգագրական և մատենագրական աղբյուրները վկայում են չափահաս պատանիների՝ ամենածանր տանջանքներով ուղեկցվող ֆիզիկական կոփման, ռազմամրցակցական և տնտեսաարտադրական գիտելիքների ձեռքբերման մասին, որից հետո նրանք հատուկ արարողությամբ մկրտվելով՝ նոր անուն են ստանում՝ ամուսնության, վարուցանքի, պատերազմի մասնակցության իրավունքը վաստակելով ծիսական մրցության մեջ[47]. «Մենամարտերը, ըստ բանահյուսության, ներկայացնում են ամուսնության ամբողջ ցիկլը՝ պատգամախոսությունը, հարսնառի և հարսանիքի ծեսերն ու մենամուսնական ընտանիքի պատվի պաշտպանությունը: Ընդ որում բանահյուսությունը պահել է դրանց հնագույն ձևերը: Ամենանախնականն այն է, երբ փեսացու որոնողն ու ընտրողն աղջիկն է»[48]:

---

[43] *Յ ո. Հ ա յ զ ի ն գ ա. նշվ. աշխ., էջ 29:*

[44] В. Я. П р о п п. Фольклор и действительность, с. 265.

[45] *ՀԺՀ, հ. VI, էջ 116–128:*

[46] В. Я. П р о п п. Фольклор и действительность, с. 265; *Ջ. Ֆ ր ե զ ե ր. նշվ. աշխ., էջ 188:*

[47] *Գյուղական հավաքույթներում, մեծ մասամբ աշնանն ու ձմռանը, կտրիճ տղաները ուժափորձուկներով էին զբաղվում, մենամարտում. «Ամբոխի առջև իգիթն իր օրում գետին չի զարկել ընկեր իգիթին» (Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու, տասը հատորով, հ. III, Երևան, 1989, էջ 94):*

[48] *Հայ ժողովրդական խաղեր, հ. II, աշխատասիրությամբ՝ Վ. Բդոյանի, Երևան, 1980, էջ 13: Մատենագրական տվյալները վկայում են հայոց Տրդատ թագավորի ֆիզիկական հզոր ուժի՝ ձիավարության, զինաշարժության, պատերազմական արվեստի, կրկեսի մրցության մեջ հմուտ լինելու՝ ցուլերի եղջյուրները ձեռքով պոկելու, վզները ոլորելով ջախջախելու մասին. «Իսկ սա (Տրդատը – Թ. Հ.) զերկուց ցլուց վայրենեաց միով ձեռամբ կալեալ զեղջերէն, թափեաց հանդերձ ընդվզեալ ջախջախմամբ: Եւ ի ձիրնթացս մեծի կրկեսին կառավարել կամեցեալ՝ ի հմտութենէ հակառակորդին ոստուցեալ յերկիր անկաւ, և բուռն հարեալ արգել զկառսն. ընդ որ ամենեքին զարմացան» (Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. Քննական բնագիրը՝ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Երևան, 1981, էջ 264): Պակաս ուշագրավ չէ նաև հայ ապստամբ իշխան Սմբատ Բագրատունու հաղթական մենամարտը արջի, կատաղած ցուլի ու առյուծի հետ և ամբոխի պահանջով հունաց Մորիկ կայսեր կողմից նրան*

Մուսա լեռից գրառված «ԹաՕքաՕվոՕւրէն բզդաՕզ դղան»[49] հեքիաթում արքայադուստրը թագավորից պահանջում է ձիարշավ կազմակերպել, որպեսզի ինքն առնի հաղթողին: «Ամիր-Շամիրի հեքիաթում»[50] (Այրարատ) արքայադուստր Ալմաստը զենք ու զրահով (գուրզ, թուր) դուրս է գալիս մենամարտելու այն տղամարդու հետ, ով իրեն կհաղթի. «Տղի ձին խոսաց, ասեց.– Ա՛յ տղա, էտ որ կա՝ Նազիկ թաքավորի աղջիկն ա, մուրազ ա արել, որ հ՚իրան զոռող տղին առնի. մուղաթ կա՛ց, զոռբա կռվող ա, շատ տղի գլուխ ա կերել»[51]: Աղջիկը մի «սամթ» ուներ, որով պարտության էր մատնում տղամարդկանց: Հիշեցնենք նաև, որ հայկական հերոսավեպում Դավիթը մենամարտում է ոչ միայն Խանդութի երկրպագուների, այլև «տղայի շոր մտած», ծպտված Խանդութի հետ.

Էսօր ես՝ դու կռիվ արինք,
Դու դրեցիր իմ մեջք գետին.
Էստուց ետքը՝ ես քե կնիկ, դու ինձի մարդ,
Ուր կը տանես՝ ա՛ռ ինձի տար[52]:

Պոնձե քաղաքում Սանասարը տեսնում է Դեղձուն-Ծամի քառասուն կտրիճ փեսացուներին, ովքեր պատժվելով ծերացել էին, դարձել դեղնամորուս՝ հարսնացուի առաջադրած մրցախաղի պահանջները չկատարելու համար: Դարպասի մոտ վեր խոյացած սյան գագաթին Դեղձուն-Ծամն ամրացնել էր տվել ոսկի խնձոր և պահանջել իր սրտին տիրել ցանկացող փահլևանից ֆիզիկական ուժի ցուցադրումով խնձորն իջեցնել բարձունքից և դարձյալ հմուտ հեծյալի ճարպկությամբ կարողանալ այն հրապարակավ ամրացնել սյան գագաթին:

Քննվող հեքիաթների կրտսեր հերոսը (տարբերակ՝ Քաչալը, Կունտը, Անդամալույծը)[53] մասնակցում է թագավորի կազմակերպած ձիարշավին: «Թաքավերեն տղորցը հաքյաթում» և «Կունտին վեպ» հեքիաթներում[54] անճանաչելի դարձած փեսացուները կատարում են թագավորի պահանջը. սպիտակ, սև, կարմիր ձիերով թռչում են 7, 8, 9 սարերի վրայով՝ ծիսական մրցապայքարում վաստակելով արքայադստեր հետ ամուսնանալու իրավունքը. «Մին թաքավեր ոՕւրաՕն ախճիգյը օխտը սարու քմակե ա տիրալ

շնորհված ներումը (Սեբէոսի Եպիսկոպոսի Պատմութիւն, Բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանիւ եւ ծանօթութեամբք ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երեւան, 1939, գլուխ ԺԸ, էջ 55–58):

[49] *ՀԱԲ, հ. 16, Երևան, 1984, էջ 47–51:*

[50] *ՀԺՀ, հ. I, Երևան, 1959, էջ 269–284:*

[51] *Նույն տեղում, էջ 277:*

[52] *Սասունցի Դավիթ, էջ 277:*

[53] *ՀԺՀ, հ. VI, էջ 32–36, հ. VI, էջ 289–292, հ. VI, էջ 650–655 (հավելված), հ. VII, էջ 107–108, ՀԱԲ, հ. 16, էջ 47–51, Հ. Գ ո ւ ր ո ւ ն յ ա ն. Համշենահայ բանահյուսություն, (այսուհետ՝ ՀԳ ՀԲ), Երևան, 1991, էջ 168–170:*

[54] *ՀԺՀ, հ. VI, էջ 32–36, հ. VI, էջ 650–655 (հավելված): Ղարաբաղում կենցաղավարած այս հեքիաթները ժանրի հնագույն նմուշներն են, որ գրի է առել շուշեցի Առաքել Բահաթրյանը 1860-ական թվականներին:*

հու ասալ. «Հու վրեր օխտը սարեն կլխավը ծիյավ լոք տա, էն վախտը ախճիգյս ուրան կտամ»[55]: Արցախից գրառված «Թաքավերեն ըխճըկանը վեսկե խնձոՕրը»[56] հեքիաթում «Թաքավերը դըրբըզեն կըլխեն մին պիհր ա տընգըմ, վեսկե խընձոՕրը քաղում կըլոխը, թա հու վեր կարե կոմբալ ըրկաթե գոՕւրգավը էն խնձոՕրը քըշըցընե, մին էլ ետ տինի տեղը, ախճիգըս ոՕւրան փեշքեշ, հու վեր կարե վեչ , կըլոխը բադա ըմ տըլական»[57]:

«Հրեղեն ծին» (Գանձակ-Տավուշ), «Նախրորդ Գալոյի տղեն» (Տուրուբերան-Մուշ), «Հայվոնը» (Խենթը–Համշեն) հեքիաթներում[58] աշտարակի ծայրին ամրացված խնձորին փոխարինում է թագավորի աղջկա մատանին: Երբ հազարավոր ջահելներ թագավորի պալատի դիմաց իրենց ուժն են փորձում, հեքիաթի «Կուճուր տղան» (Քաչալը, Խենթը), հրեղեն ձիով սրընթաց արշավելով, բարձր աշտարակից իջեցնում է թագավորի աղջկա մատանին. «Թաքավերը ըխճկանը կըղնըցնում ա պալատի ամենապաՕցր բլկոնումը հու ասում. «Հով իրա ծիով թռչի, ըխճկա մատի մտանին հանի, իմ փեսեն ա»[59]: Կամ՝ «Ավուրը մեգը թակավորին ախճիկը մեձնա կու, կը՝լլի հայսընծու, ամա ուվեկ չի կալ աՕդու ուզուշ: Թակավորը միտկը գնաՕ հընու հնարը կդնու կու: Ախճրգոնը մադնին մադրն հոնա կու, տնաՕ կու պայսրը դեղ մը: Վեվ օր գայնաՕր ըն դեղրն ցած առնուլ հընու մադը օնծընէր, ախճիկը ընու դվող էր»[60]: Խենթը, հաղթահարելով երեք մետրանոց բարձրությունը, ձեռք է բերում թագավորի աղջկա մատանին և ամուսնանում նրա հետ: «Արևելոց թագավորի տղի և Չամ-Չրաղի հեքիաթում»[61] խնձորին ու մատանուն փոխարինում է ձմերուկը: Թագավորը պառավի առջև պայման է դնում. «Ձմերուկ կհանիմ դնիմ բերդի մնարի վրեն, թե օր քու տղեն կառցավ ջըրընդով քշե էն տեխ, զարկե բերե ցած, զիմ ախչիկ կիտամ, թը չէ, ըզգլուխ կզարկիմ»[62]:

Ուշագրավ է, որ թե՛ «Սասնա ծռեր» էպոսում, թե՛ ժողովրդական հեքիաթներում «յոթ կամ քառասուն» դևեր խաղում են ոսկե խնձորով. «Օսկի խնձոր առած ա ձեռ, սրով կու թալեն իրուր. էն կու թալե էնոր, կասա՝ «Զվալ Աստղի էշխին». էն կու թալե էնոր, կասա՝ «Զվալ Աստղի էշխին»[63]: Բաղդասարին օգնության գնալիս Սանասարն ականատես է լինում նույն տեսարանին.

«Տեղ մ՝ էլ տիսավ, վուր յոթ դև նստած մեկտեղ,
Մեկ խնձուր կա, ըն կը թալը՛ ընու,
Ընը կը թալը ընու,
Կըսի. «Խազար բարին քի»[64]:

---

[55] *Նույն տեղում, էջ 34:*
[56] *Թ. Հայրապետյանի անհատական գործուղման նյութեր, Արցախ, տետր -2, 2006 թ.:*
[57] *Նույն տեղում:*
[58] *ՀԺՀ, հ. VI, էջ 289–291, հ. VII, էջ 29–33, ՀԳ ՀԲ, էջ 168–170:*
[59] *ՀԺՀ, հ. VI, էջ 290:*
[60] *ՀԳ ՀԲ, էջ 168:*
[61] *ՀԺՀ, հ. XI, Երևան, 1980, էջ 13–29:*
[62] *Նույն տեղում, էջ 18:*
[63] *Նույն տեղում, էջ 366:*
[64] *Սասնա ծռեր, հ. Ա, Երևան, 1936, էջ 320:*

Փաստորեն, հայկական բազմաթիվ հեքիաթներում և էպոսի տարբեր պատումներում խնձորը խաղարկվում է մի կողմից՝ իբրև չար ուժերի (դևերի) կողմից արգելափակված գեղեցկուհիների, մյուս կողմից՝ նվիրագործյալ հերոսների շնորհիվ ազատագրված պտղաբերության ու վերարտադրության խորհրդանիշ, որտեղ էլ, ամենայն հավանականությամբ, թաքնված է «կռվախնձոր» բառի նրբիմաստը:

Ինչպես հեքիաթի նվիրագործվող հերոսը (մեծ մասամբ կրտսեր տղան), այնպես էլ հայոց դյուցազնավեպի Սասունցի Դավիթը հարսնացուին խորհրդանշող սիրո խնձորը ստանում է իբրև ընծա[65]:

Հնագույն տոնահանդեսների, ծեսերի, սովորույթների հետ սերտորեն առնչվող ոսկի խնձորները, կենաց ծառերն ու հեղուկները՝ իրենց համապատասխան կաթսաներով, անոթներով, գավաթներով ու տարբեր կենդանիների եղջյուրներով, համարվում են պտղաբերության խորհրդանիշեր, «և այդ բոլորի մեջ յուրահատուկ կերպով պահպանված են մարդկային պատմության հնագույն ժամանակների հարուստ արձագանքները»[66]: Կենսապահովման մշակույթում այդ հեղուկներն իրենց ձեռք բերած ոգելից հատկություններով գործադրվում են գաղտնածիսային արարողություններում և հրաշապատում հեքիաթներում մշտապես ընկալվում են իբրև անմահական ջրեր:

Հայկական շատ հեքիաթներում՝ «Որսորդ Հայրապետ»[67], «Արար աշխարհի գեղեցկուհին» (Դունյա գյուզալի)[68], «Բլլել աղջիկ»[69], «Ասլան թագավոր»[70], «ԲաՕհրաՕմ ու Դընդռան»[71], գինին, օշարակը (մերոե շերպեթ), օղին, խահվեն (սուրճ), ծխախոտը, նարգիլեն (գլգլակ, դայլան) գործածվում են իբրև նվիրագործման խորհրդածեսի ժամանակ իրականության գիտակցման բնազանց վիճակին (տրանս) նպաստող ոգեպատիր խմիչքներ ու թմրախոտեր: «Որսորդ Հայրապետ» հեքիաթում «Ջուրը խմին, ընկան պարկան ու քնան: Էադ եոթ տարվա գինի էր, խմողը պայիլմիշ էղավ, ընկավ»[72]: «Արար աշխարհի գեղեցկուհին» (Դունյա գյուզալի) հեքիաթում գեղեցկուհին յոթ տարվա գինով հարբեցնում է տղային. «Գինին բերեցին, շատ խմցուցին, տղի խելք վերևեն գնաց. նոր էլան, տղին ձմի պես տարան ու բերին, ջիկյաՕր բերնեն էկավ, ընկավ, տղեն թալեցին դուս»[73]: Այնուհետև տղան հնարամտորեն պատժում է Դունյա գյոզալին, ետ է ստանում իր «ջիկյաՕրը» և նախամուսնական փորձությունների փոխադարձ հաղթահարումով՝ նրանք արժանանում են միմյանց: «Փոկոտն»[74]

---

[65] *Ամենայն հավանականությամբ, վերոհիշյալ պատկերացումների արդյունք է «կարմիր խնձոր» ծեսում խաղարկվող խնձորը:*

[66] *Ա. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 452, 497:*

[67] *ՀԺՀ, հ. XVI, Երևան, 2009, էջ 397–408:*

[68] *Նույն տեղում, էջ 25–32:*

[69] *Նույն տեղում, էջ 297–317:*

[70] *ՀԺՀ, հ. I, էջ 216–227:*

[71] *ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, FAIV, 0417–0474* (*Մոկս*):

[72] *ՀԺՀ, հ. XVI, էջ 399:*

[73] *Նույն տեղում, էջ 29:*

[74] *ՀԺՀ, հ. III, Երևան, 1962, էջ 230–242:*

հեքիաթում տղան գերի է ընկնում Փոկոտնի (մեջքից ներքև փոկ) ձեռքը և որոշում է ազատվել խաղողի հյութից պատրաստած ոգեթուրմով: Նա դդումը ծակում է, խաղողի հյութը քամում մեջը և որոշ ժամանակ անց տալիս է Փոկոտնին. «Դդումը կերավ, խաղողի ջուրը խմեց, թուլացավ, արձակվեցավ ընկավ, գոմբալով մի հարված տվի սպանեցի, պրծա»[75]: Եթե նախնական պատկերացումների հիմքով ստեղծված հեքիաթներում նվիրագործյալները «ոսկե թասով գինի ու շերպեթ էին խմում ու թլֆում» (անզգայանում), ապա հետագա շրջանում գրառված հեքիաթներում այդ խմիչքներին փոխարինում է սուրճը (խահվե, դայվե, կահվե)[76]. «Հարսը դայվե էփեց, օսկի ֆինճանով տվեց»[77]:

«Գորտ»[78] հեքիաթում տղան որսի է գնում, մի կեյիկ (վայրի ոչխար) է որսում, որոշում է «խավուրմա» անել, բայց ծխել է ուզում. «Չպողը խմեց, քունը տարավ»[79]: Այնուհետև աղջիկը «Տղին թևեն բռնեց, առավ գնըց, տարավ կոխեց իրան օդան, լաթերը փոխեց. գինք լոքցոց. մերդե շերպեթ էրին, խմեցին, եաթաղը ցգեցին, պարկան... Առավոտնը էլան, դայվե, չպող քաշեցին»[80]: Նույն հեքիաթում տղան կռվից առաջ սուրճ է խմում. «Էլիր դայվե մի էփե, խմիմ, պատրաստ տեսնըք»[81], ինչպես նաև վճռական մարտը սկսում է հանդարտ չիբուխ քաշելով. «Չպող խմելեն կամաց-կամաց կէրթա»[82]:

Հրաշապատում հեքիաթների հերոսները հարսնացուի համար են պայքարում և մտնում մրցասպարեզ. «Եվ հենց այդ մրցումների ու մրցանակաբաշխությունների ժամանակ է, որ, որպես գաղափարական մեծագույն սիմվոլներ, մեծ տեղ են գրավել կենաց ծառերը, կենաց հեղուկները, գավաթները, ոսկի խնձորները և այլն»[83]: Հնդկաստանում կենաց հեղուկը պատրաստվում էր սոմա *կոչվող բույսից (*Asclepia acida *կամ* Sarcostemma viminalis*), Պարսկաստանում այն ստացվում էր «*haoma*» բույսից: Հին Հայաստանում կենաց հեղուկ էր համարվում խաղողից և նռից պատրաստված գինին: «Զվալ Աստղ և Նռանխատ ու Օսկեծամ»[84] հեքիաթում երազի մեջ աղջիկն ու Նռանխատը միասին վայելում են օշարակը: Աղջիկը «թաս մի շարբաթ էտուր Նռանխատին»[85]: Այնուհետև պառավը «թաս մի գինի, յա թաս մի արաղ» է ուզում, «օր խմեն, հալալամիշ էղնին»[86]: Պառավը «գնաց, բերեց մե կավ գինին, նստան, խմեցին, գինին յոթ տարվա էր, հըմալ էրեց օր Նռան խատի խելքը առավ գլխուցեն, ուշքը գնաց, ընկավ»[87]:*

---

[75] *Նույն տեղում, էջ 240:*
[76] *ՀԺՀ, հ. XII, էջ 451:*
[77] *ՀԺՀ, հ. XVI, էջ 339:*
[78] *Նույն տեղում, էջ 334–352:*
[79] *Նույն տեղում, էջ 336:*
[80] *Նույն տեղում, էջ 343:*
[81] *Նույն տեղում, էջ 348:*
[82] *Նույն տեղում, էջ 346:*
[83] *Ա. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 497:*
[84] *ՀԺՀ, հ. IX, էջ 361–375:*
[85] *Նույն տեղում, էջ 369:*
[86] *Նույն տեղում, էջ 372:*
[87] *Նույն տեղում:*

Չարսանճագի բարբառով պատմված «Գորտ»[88] հեքիաթում էլ Մարգարտե թասով լցվելիք ջուրը երկու աշխարհների սահմանագիծ «փէնճէրէից» այն կողմ տղային ու աղջկան մղում է նախամուսնական փորձությունների հաղթահարման հորձանուտը: Այստեղ նույնպես խոսքը կենաց թասի, պտղաբերության պսակի մասին է՝ կապված իշխանության, սիրո և պտղաբերության հետ. «Չորս թաս ուներ հարսը, չորսն էլ չորս մեարիֆեթ ուներ: Օսկի թասով լցեց ջուրը վրան, ջուրը օսկի կըյրվավ: Ալմաստ թասով լցեց ալմաստ կըյրվավ: Անգին քարե թասով լցեց՝ անգին քար կըյրվավ»[89]:

«Պատմութիւն Ֆարման մանկանն»[90] միջնադարյան պոեմի համանուն հերոսը մրցում է Խորասանի քաջերի և պարսից զորքի ամենաքաջ փահլևան Փոլատի Հնդիի հետ: Վերջինիս հետ մրցավեճը թեժանում է այն աստիճան, որ թագավորը հրամայում է նրանց իջնել ձիերից, հանել զենքն ու զրահը և մրցել ըմբշամարտությամբ: Մրցողները խաղում են թրով, դաշույնով (խանջար), նետ ու աղեղով, գուրզով, գնդակով, ասպարով: Նրանք մտավոր և ֆիզիկական դաստիարակություն ստացած «մանկտիք» են, «կտրիճներ» և «փահլևաններ», ովքեր մրցում են հարսնացուին տիրանալու համար: Բանակռվին հաջորդում է ֆիզիկական մրցությունը, որն ավարտվում է Ֆարմանի հաղթանակով: Մրցանակը թագավորի դուստրն է և վերջինիս հոր տված ծիսական խմիչքները՝ օղին ու օշարակ-գինին.

Երետ մեծ թագաւորրն նորա խալաթ,
Զգեստներ գեղեցիկ, զամէնն ոսկով սաթ,
Երետ նորա արաղ, գինի ու շարպաթ,
Ասաց.– Այլ մի՝ խաղար՝ հազար ամանաթ[91]:

«Հերոսը հերոսուհուն հասնելու համար պիտի համապատասխան քննություն տա: Նա պետք է ցույց տա իր ֆիզիկական ու մտավոր կարողությունների հզորությունը, դրանով հաղթի բոլոր մրցակիցներին և ապա միայն հասնի «էն թասին» ու «էն պսակին»[92]. խոսքը կենաց թասի ու պտղաբերության պսակի[93] մասին է:

Ցայսօր մարզաշխարհի մրցանակաբաշխություններում հաղթողներին պարգևատրում են հատուկ գավաթներով ու անոթներով, որոնք մեծավ մասամբ ավարտվում են գնդերով, այսինքն՝ խորհրդանշական խնձորով, ինչի շուրջն էլ ծավալվել է մրցապայքարը: Ըստ էության՝ դրանք երբեմնի ծիսանոթների մասին հիշողություններ են, որոնք ընդամենը խորհրդանշական մրցանակներ են նորօրյա մարզական խաղերի ու մրցումների մեջ. «Այսօրվա դատարկ ու ոչնչով չլցվող անոթները, երբեմնի կենաց հեղուկով

[88] *ՀԺՀ, հ. XVI, էջ 334–352:*
[89] *Նույն տեղում, էջ 340:*
[90] *Պատմութիւն Ֆարման մանկանն, հրատ. պատրաստեց Շ. Նազարյանը, Երևան, 1957, էջ 50–185:*
[91] *Նույն տեղում, էջ 95:*
[92] *Ա. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 495:*
[93] *Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն. Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից, Թիֆլիս, 1892, էջ 70:*

լցված այն անոթներն են, որոնք այնքան մեծ տեղ են գրավել հասարակական հանդեսներում և մրցումներում»[94]:

Խնձորակիր սյան ու ծիսական մրցանակաբաշխության հետքերը պահպանվել են նաև ժողովրդական խաղիկներում. տանիք ելնելու, դաշույնով երդիկը բացելու, խնձոր գլորելու խիզախությանը, սակայն, գումարվել է հետագա ժամանակների՝ սիրածին տանը չգտնելու բարոյահոգեբանական երևույթների արձագանքը.

Ելա տանիք, թափ քելեցի,
Ջարկի լանկե մ՝ երդիկ բացի,
Կարմիր խընձոր գըլորեցի,
Երդկեն ի ներս ձեն տըվեցի,
Իմ յար տուն չէր, նըստա լացի[95]:

Հրաշապատում հեքիաթներում աշտարակների, գմբեթների ու սյուների ծայրերին ամրացված ոսկի խնձորներն ու գնդերը (հմմտ. փեսայի հարսանեկան ծառի գագաթին ամրացված խնձորի և հեքիաթների բանաձևային ավարտին երկնքից ընկնող խնձորների հետ), պտղաբերության հմայական խորհրդանիշ լինելուց բացի, «խաղի ու մրցման» առարկա են, «մետաղյա խաղալիք-մրցանակ»[96], ինչն առավել ցայտուն արտահայտված է խնձորին բնութագրող «ոսկյա» մակդիրի մեջ: Միանգամայն հասկանալի է, որ գունդը սովորական չափի կամ քաշի խնձոր-մրցանակ չէ և երկաթագամ ծանր գուրզով կամ մկունդով մեծ բարձրությունից դրա ցած բերելը պահանջում է քաջություն, հեծելավարության ճկուն հնարքների իմացություն:

Հեքիաթներում սյունը կամ ձողը փոխարինում է կենաց ծառին, որի ծայրին ամրացված խնձորը սովորական նշանակետ կամ թիրախ չէ, այլ ամուսնացող աղջկա՝ հարսնացուի խորհրդանիշը, ում տիրելու համար մրցման ու պայքարի են ելնում հրաշապատում հեքիաթի հերոսները՝ ցուցադրելով իրենց ուժը և կամքը, տոկունությունն ու անձնազոհությունը:

КУЛЬТУРА РИТУАЛЬНЫХ СОСТЯЗАНИЙ В АРМЯНСКИХ ВОЛШЕБНЫХ СКАЗКАХ

ТАМАР АЙРАПЕТЯН

Резюме

Обобщая имеющиеся фольклорные, этнографические, исторические, культурологические данные, можем утверждать, что в основе проводившихся архаических ритуальных состязаний-празднеств, конкурсов лежат пережитки древнейших общественных отношений (брак, престолонаследие).

[94] *Ա. Մնացականյան. նշվ. աշխ., էջ 499:*
[95] *Մ. Աբեղյան. Ժողովրդական խաղիկներ, Երևան, 1940, էջ 313:*
[96] *Ա. Մնացականյան. նշվ. աշխ., էջ 499:*

Этим и можно объяснить происхождение до сих пор бытующих в современности символических призовых кубков, древа жизни и шаров (в виде свадебного золотого яблока). Эти символы, являющиеся предметами соревнований, игр, свадебных церемоний, в древности одновременно были связаны с властью, любовью и плодородием.

THE CULTURE OF RITUAL COMPETITIONS IN THE ARMENIAN FAIRY TALES

TAMAR HAYRAPETYAN

S u m m a r y

Condensing folklore, ethnographical, historical, culturological facts, we can say that the survivors of social relations of ancient times (marriage, succession of the throne) are underlined in the former ritual competitions, festive performances and award-giving ceremonies. The origin of trees of life, symbolic race-cups and shots (wedding gold apple), which co-exist until today, must be explained by that. Being objects of plays, competitions and wedding ceremonies, in ancient times these symbols at the same time were connected with power, love and fruiting.